Եթէ Ինքնաշխատ Եք

2012թ.

Սոցիալական Ապահովության ծրագրի մասնակցողները մեծամասնությամբ գործավոր են: Գործատէրը աշխատավարձից նվազում է Սոցիալական Ապահովության հարկեր, ավելացնում է հաւասարաչափ գումար, ուղարկում է Ներքին Հարկային Ծառայողության, եւ արձանագրում է հասույթը Սոցիալական Ապահովության մօտ: Սակայն, ինքնաշխատ անձիք անձամբ պէտք է ուղարկեն իրենց հասույթը եւ հարկերը Ներքին Հարկային Ծառայողության:

Դուք ինքնաշխատ եք եթէ առանձին կամ գործակիցի հետ վարում եք մի արհեստ, առեւտուր կամ մասնագիտություն: Դուք արձանագրում եք ձեր հասույթը Սոցիալական Ապահովության մօտ ձեր տարեկան դաշնակցային հարկերու հայտարարության ներկայացմամբ (federal income tax): Եթէ ձեր տարեկան զուտ հասույթը 400 դոլար է կամ աւելի, պէտք է այս եկամուտը արձանագրեք SE ցուցակով (Schedule SE), որեւէ այլ պէտք եղած թղթերի հետ:

Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի հարկերի վճարում

2012 թվի համար ինքնաշխատության Սոցիալական Ապահովության հարկի սակն է 13.3 տոկոս մինչեւ 110,100 դոլար եկամուտի համար: Եթէ ձեր զուտ հասույթը 110,100 դոլարից աւելի է, դուք շարունակում եք մնացյալ եկամուտի համար վճարել միայն Մէտիքէրի հարկը, որը 2.9 տոկոս է:

Ձեր հարկերը նվազեցնելու համար կան երկու եկամտահարկային հանումներ:

Առաջին, ձեր Սոցիալական Ապահովության հարկի կէսը հանում եք ձեր զուտ հասույթից: Սա նմանում է գործավորի պարաքայում, երբ նրան գործատիրոջ վճարած հարկի բաժինը աշխատավարձ չի համարվում գործավորի համար:

Երկրորդ, դուք կարող եք ձեր Սոցիալական Ապահովության հարկի կէսը հանել Ներքին Հարկային Ծառայողության Ձեւ 1040-ի վրա: Բայց այս նվազումը պէտք է կատարվի ձեր ընդհանուր եկամուտից՝ որոշելու համար ձեր ճշգրիտ ընդհանուր եկամուտը: Այն չի կարող լինի առանձին նշված նվազում եւ պէտք չէ նշվի ձեր C ցուցակի մեջ:

Եթէ ունեք աշխատավարձ եւ ինքնաշխատության հասույթ, նախ վճարում եք ձեր աշխատավարձերի հարկը: Այս օրէնքը կարեւոր է միայն եթէ ձեր ընդհանուր հասույթը 110,100 դոլարից բարձր է: Օրինակ, եթէ 2012 թվին ունեցել եք 30,000 դոլար աշխատավարձ եւ 40,000 դոլար ինքնաշխատության եկամուտ, դուք համապատասխան Սոցիալական Ապահովության հարկեր վճարելու եք երկու եկամուտների վրա: Բայց եթէ 2012 թվին ձեր աշխատավարձը 77,500 դոլար է եւ առեւտրից ունեք 32,800 դոլար զուտ հասույթ, դուք կրկնակի Սոցիալական Ապահովության հարկ չեք վճարի 110,100 դոլարից անցնող հասույթին համար: Ձեր գործատէրը ձեր 77,500 դոլար եկամուտի համար կպահի 5.65 տոկոս Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի հարկեր: Դուք վճարելու եք 13.3 տոկոս հարկ մնացյալ 32,600 դոլարի համար եւ 2.9 տոկոս Մէտիքէրի հարկ՝ մնացյալ 200 դոլար հասույթի համար:

Աշխատանքի վարկեր

Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու համար պէտք է Սոցիալական Ապահովության հարկեր վճարած լինեք աշխատելով մի որոշ ժամանակ: Ձեր ծննդյան թվից կախյալ է հարկավոր եղած աշխատանքային ժամանակաշրջանը, սակայն առաւելագոյնը 10 տարի պէտք է աշխատած լինեք (40 վարկ):

2012 թվին, եթե ձեր զուտ հասույթը 4,520 դոլար կամ աւելի է, դուք շահում եք տարեկան առաւելագոյն չորս վարկեր՝ մէկ վարկ ամէն 1,130 դոլարի համար: Եթէ ձեր զուտ հասույթը 4,520 դոլարից քիչ է, թերեւս կստանաք վարկ՝ օգտագործելով այս թերթիկում աւելի ուշ նկարագրված կամավոր կերպի միջոցով:

Ձեր ընդհանուր աշխատանքային պատմությունն է որոշում ձեր ապագայում ստանալիք նպաստների գումարը: Ուրեմն, կարեւոր է որ ձեր լրիւ հասույթը արձանագրեք Սոցիալական Ապահովության մօտ, ինչպես օրէնքը պահանջում է:

Ձեր զուտ հասույթի կռահումը

Սոցիալական Ապահովության համար զուտ հասույթ նշանակում է ձեր ընդհանուր հասույթը՝ ձեր արհեստից կամ առեւտրից, նվազ ձեր օրինական առեւտրական հանումներ եւ արժէգազրկումներ:

Որոշ եկամուտներ հաշվի չեն առնվում Սոցիալական Ապահովության կողմից եւ պէտք չէ մաս կազմեն ձեր զուտ հասույթի հաշվին՝

- Բաժնետոմսային (stocks) շահաբաժին եւ պարտատոմսերի (bonds) շահ, բացի այն դէպքում, երբ դրանք ստանում եք որպես բաժնետոմսերի եւ արժեթղթերի գործակատարու.
- Փոխատվություններից (loans) շահ, բացի այն դէպքում, երբ ձեր գործը փոխատվություն կատարել է.
- Կալվածի վարձեր, բացի այն դեպքում, եթե կալվածի գործակատար եք կամ կանոնավորապես ծառայություն եք մատուցում առավելաբար վարձողի համար. կամ
- Սահմանափակ գործընկերությունից (limited partnership) ստացված եկամուտ:

Կամավոր կերպ

Եթէ ձեր իսկական զուտ հասույթը 400 դոլարից քիչ է, ձեր հասույթը հաշվի կառնվի Սոցիալական Ապահովության համար կամավոր կերպով տեղեկագրման միջոցով: Կամավոր կերպով տեղեկագրման միջոցը կարող եք օգտագործել՝ եթէ ձեր ընդհանուր հասույթը 600 դոլար կամ աւելի է, կամ ձեր շահը 1,600 դոլարից քիչ է:

(շրջել)

Դուք կամավոր կերպով տեղեկագրման միջոցը կարող եք օգտագործել միայն հինգ անգամ ձեր կյանքում: Ձեր իսկական զուտ եկամուտը պէտք է լինի 400 դոլար վերջին երեք տարիների ընթացքում առնվազն երկու տարվա համար եւ ձեր զուտ հասույթը պէտք է լինի ձեր ընդհանուր եկամուտի երկու երրորդը:

Ահա թէ ինչպես կգործի այն՝

- Եթէ ձեր ընդհանուր եկամուտը ինքնաշխատությունից 600 դոլարի եւ 2,400 դոլարի միջեւ է, դուք կարող եք տեղեկագրել ձեր ընդհանուր եկամուտի երկու երրորդը կամ իսկական զուտ հասույթը. կամ
- Եթէ ձեր ընդհանուր եկամուտը 2,400 դոլար է (կամ աւելի), իսկ իսկական զուտ շահը 1,600 դոլար է (կամ նվազ), դուք կարող եք արձանագրել 1,600 դոլար կամ ձեր իսկական զուտ հասույթը:
- Սկսած 2008 հարկային տարուց հաշվետվություն ներկայացնելու ոչ պարտադիր եղանակի օգտագործմամբ առավելագույն հաշվետու գումարը հավասար է լինելու տվյալ տարում չորս աշխատանքային կրեդիտ ստանալու համար անհրաժեշտ գումարին: Օրինակ, 2012 հարկային տարվա համար ոչ պարտադիր հաշվետվություն ներկայացնելու եղանակի օգտագործմամբ առավելագույն հաշվետու գումարը կազմելու է $4,520 ($1,130 x 4):

Հատուկ տեղեկություն հողագործներին՝
Եթե հողագործ եք, կարող եք կամավոր կերպով տեղեկագրման միջոցը օգտագործել ամէն տարի: Անհրաժեշտ չէ, որ ունեցած լինեք նվազագույնը 400 դոլար զուտ հասույթ անցած տարում: Թելադրում ենք որ կարդաք հետեւյալ հրատարակությունը *A Guide For Farmers, Growers And Crew Leaders* (*Ուղեցույց Հողագործներու, Աճեցնողներու եւ Գործավորների Առաջնորդներու, հրատարակութա համար* 05-10025): Այս հրատարակությունը Հայերէն լեզվով չկայ: Դրանից բացի, փոփոխվում են ֆերմային համախառն շահույթի, ֆերմային զուտ շահույթի եւ ոչ ֆերմային շահույթի գումարները:

«IRS»-ի «Հարկային ուղեցույց փոքր բիզնեսի համար» հրապարակում 334-ում պարունակվում է լրացուցիչ օգտակար տեղեկատվություն: *Tax Guide for Small Business*. Այն կարող եք գտնել՝ ***www.irs.gov***-ում կամ զանգահարեք՝ **1-800-829-4933**:

Ինչպէս արձանագրել հասույթը

Դուք պարտավոր եք հետեւյալ դաշնակցային հարկի թղթերը լրացնել ամեն տարվա մինչեւ Ապրիլի 15-ը եթէ ունեցել եք 400 դոլար կամ աւելի զուտ հասույթ:

- Form 1040 (*U.S. Individual Income Tax Return*, Ձեւ 1040— *Ամերիկայի Միացյալ Նահանգներու Անհատի Եկամուտի Հարկերի Հայտարարություն*).
- Schedule C (*Profit or Loss from Business*, Ցուցակ C— *Շահ կամ Վնաս Առեւտուրից*) կամ Schedule F (*Profit or Loss from Farming*, Ցուցակ F— *Շահ կամ Վնաս Հողագործությունից*) որն որ պատշաճ է, եւ
- Schedule SE (*Self Employment Tax*, Ցուցակ SE— *Ինքնաշխատության Հարկ*)

Այս ձեւաթղթերը կարող եք ստանալ IRS-ի կայքից՝ ***www.irs.gov***: Հարկային հայտարարագիրն ու ցուցակները՝ ձեռներեցության հարկի վճարի հետ միասին, ուղարկեք IRS:

Եթէ նոյնիսկ պարտական չեք եկամուտի հարկեր վճարելու, պէտք է լրացնեք 1040 Ձեւը եւ SE Ցուցակը՝ վճարելու համար ինքնաշխատության Սոցիալական Ապահովության հարկ, նոյնիսկ եթէ արդեն իսկ ստանում եք Սոցիալական Ապահովության նպաստներ:

Ընտանեկան ձեռնարկության համաձայնություն

Ընտանիքի անդամները կարող են համատեղ ձեռներեցությամբ զբաղվել: Օրինակ՝ ամուսինն ու կինը կարող են գործընկերներ լինել՝ համատեղ ձեռնարկությունում: Եթե Դուք համատեղ ձեռներեցությամբ եք զբաղվում, ապա նույնիսկ համատեղ հարկային հայտարարագիր ներկայացնելու դեպքում յուրաքանչյուրդ պետք է գործունեությունից ստացած իր զուտ շահույթը ներկայացնի անհատական աշխատանքային գործունեության առանձին հայտարարագրով (ցուցակ SE): Գործընկերները պետք է որոշեն, թե նրանցից յուրաքանչյուրը զուտ շահույթի որ մասը պետք է ներկայացնի (օրինակ՝ 50 տոկոս և 50 տոկոս): Բացի այդ, եթե ամուսինները երկուսն էլ զգալիորեն մասնակցում են համատեղ ձեռնարկատիրական գործունեությունում և համատեղ հարկային հայտարարագիր են ներկայացնում, ապա կարող են, ըստ իրենց նախընտրության, հարկվել որպես որակավորված համատեղ ձեռնարկություն և ոչ՝ որպես ընկերակցություն: Ամուսիններից յուրաքանչյուրը պետք է առանձին ցուցակ ներկայացնի՝ C կամ C-EZ:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե հպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10022-AM
If You Are Self-Employed (Armenian)
March 2012